

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ  
 Ե. ԲՈՐՈՍԵԱՆ  
 Երևանի կամ արևելքի գրասենյակի  
 պետք է ուղղել առ  
 Տնօրինարան ԱՐՄԵՆԱՅԻՆ Լրագրի  
 ԳԱԶԵՏԻ (Եգիպտոս)

Adresse:  
 M. BOROSIAN  
 Direct. - propr. du journal Arménien  
 ARCHALOUXOS  
 LE CAIRE (EGYPTE)

Les annonces sont reçues à des prix  
 très modérés.

# ԱՐՄԵՆԱՅԻՆ

## Լ Ի Ր Ա Գ Ի Բ

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՁՈՐԵՔԵԱՐԻ ԵՒ ԵՄԲԱԹ ՕՐԵՐԸ

Les annonces sont reçues à des prix  
 très modérés.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
 ԵՐԵՎԱՆԻ ԶԱՄԱՐ  
 Տարեկան 10 րիկի սովոր սյր դաս... 60  
 Արժույթ... 35  
 ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ  
 Տարեկան Ծրանք... 20  
 Արժույթ... 12

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԿԱՆԿԵՐԻ  
 և Թղթատարի ծախքը  
 Խնայարարական վրայ է:

Խնայարարական ուղղում գրաքիսի  
 և չեն օրեի:

ԱԶԳԱՐՈՒԹՅՈՒՆԻ  
 Կանխիկ վճարելի են:

**ՅԱԿԵՐԳԲ ԶԱՅՐԵՆԵԱՅ**  
 Գնել փափաքողը կրան գիվել թեր-  
 օթի խմորագրություն:  
 Թղթակապի գինն է 10 գահեկան սղլ:

**ՏՈՒՍ. Ս. Յ. ԲԻՐՈՍԵԱՆ**  
 Պատիւ ունի ծանուցանել արդյո՞հա-  
 սարակութեան թէ՛ իր գլխիկի փոխադրած  
 է Տահերէն ի Երա Ապա-էլ-Ալֆը, Եփրատի  
 սական թատրոնի կարգը, առաջին փողոցի  
 անկիւնի տունը: Հիւանդ կ'ընդունի ամէն  
 օր ժամը 2 և 4: Մասնաւոր խնամք աղայոց  
 և ջղային հիւանդութեանց: 333

### ՄՆՈՒՆԻ ԵՐՈՐՈՒԹԻՒՆ

Մնունդի ծառէն վերջն է ծնունդի նո-  
 րութիւնը:  
 Մին ունի արեւմտեան աշխարհներու  
 համար իր կարեւորութիւնը, իսկ միւսը՝  
 Եփրատի սական հետեւեալներու քով միշտ իր  
 թարմութիւնը պիտի պահէ:  
 Կ'ընդ է պիտի բան ծնունդի նորութիւ-  
 նը, որովհետեւ այդ բառը ու իրեն անու-  
 նին կապուած մեծածայն արարողութիւն-  
 ները՝ ամեն տարւոյ համար նոր ու թարմ  
 են ու պիտի մնան, արդեօք քանակաբար  
 դարը նոր Յիսուս մ'աւ ծնած է, ծնունդի  
 օրով...  
 Առանց դեղեկելու այս պիտի բանը,  
 կամ անոր նման բան մը: Այսինքն Գահի-  
 րէի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցին մէջ՝  
 Մնունդի Աւետարանը իր Արարեբէնի ճիւղը  
 ծրնած է...  
 Քիչ մը աւելի լուսարանելու համար  
 խնդիրը պարզապէս բանը որ՝ Ս. Մնուն-  
 դի առաւօտուն, պատարագի Աւետարա-  
 նին Հայերէնը կարգաւորելէ վերջ, կըրկ-  
 նամկութեան անցուցած ըլլալու համար  
 անշուշտ Աւետարանի տիրոջը խօսքերը, Ա-  
 րարեբէնի ալ կարգաւորելու հրամանը կը  
 տրուի, և հաւատացեալ ժողովուրդին ուն-  
 կըրկութիւնը ու հարեբութիւնը շարադար  
 կերպով գործածուելու պատճառ կը տրուի:  
 Ահա ամբողջ եղելութիւնը որ՝ կար-  
 ծենք, այսպիսի պատճառով լուսով բերելու  
 իրաւունքն զուրկ կը մնայ իսպառ...  
 Ս. Սրբազնութիւն առաջնորդը, որուն  
 միայն կ'իյնայ Արարեբէնի աւետարանի ըն-  
 թեցումը հրամայել կամ ոչ, անշուշտ շատ  
 լայն մտածումներով արտօնած է: Գա իրեն  
 իրաւունքն է և հոս ոչ ոք միջամտելու ձե-  
 ուն հասութիւնը ունի (ի բաց առեալ Պօլ-  
 սայ Կեղք: Իշխանութիւնը): սակայն նորին  
 Սրբազնութեան թոյլտուութիւնը պիտի խնդ-  
 րենք իրեն ուշադրութեամբ յանձնելու հա-  
 մարձեկ քանի ազգայիններու խորհրդա-  
 ծութիւններն ալ, որոնք գէթ մեր կողմէ  
 անտեղի չեն նկատուիր:

Մնունդի կիրակի օրն է պարտաւորիչ  
 և ո՛չ անիպակամ այցելութիւնները կը  
 փոխանակուին Հայերու մէջ: ասոնք գե-  
 րագոյն միջոցը կը հայտնային Մնունդի  
 նորութեան վրայ ալ կարծիքներ փոխանակ-  
 ուելու:  
 Բարեկամական շրջանակի մը մէջ տաք-

զուրկ, հայրենասէր ու քիչ մ'ալ ազգա-  
 սիրական զգացումներով բեռնակրողն ու  
 ըրտասարդի մը ինկած է խօսքին կարգը:  
 Բացի «Տիկնայք և Տիարք» վերադի-  
 րէն, իր առաջին բառերը հաստատիկ:  
 - «Անօրուս է, եղբայր, հակառակե-  
 րիպտոսի մէջ հայերու բազմամասուն, հա-  
 կառակ Լարան Ընթերցարանի մը կարգու-  
 թեան համար եղած շնորհներուն, հակառակ  
 հետզհետէ երեցող պարբերական հրատա-  
 րակութեանց, հակառակ Գահիրէի և Ա-  
 ղէքանդիքի: մէջ հրատարակուող հայերէն  
 թերթերուն բազմութեան, որոց թուոյն  
 վրան վերջերս «ժողովուրդն» ալ աւելցաւ,  
 հակառակ հայերու սրտին մէջ հայութիւնը  
 զարգացնելու համար եղած անբոլ շնո-  
 րներուն, հակառակ մեր Ս. Օ ին «Հարց  
 Պատասխաններ» հրատարակ հանելու հա-  
 մար կրած շարժարաններն ու վճարած փա-  
 րաններուն, վերջապէս՝ հակառակ Աղէքան-  
 դերացիներու ճիշտ մը ձեռնադրելու կամ  
 «ոչ» ին համար հանած ահագին ազմու-  
 կին, դեռ այսօր Ս. Մնունդի օրով մեզի  
 եւր Արարեբէնի աւետարան կ'ընդ կը հը-  
 բաւանքն: տարօրինակ չէ՞ այս ու քիչ մ'ալ  
 ծիծաղելի:»

Իրան է կրնայ ըլլար որ Սրբազնը  
 մեր եկեղեցւոյ չափազանց հաճոյնարանա-  
 րուրեցեցեալ օգտուելով, և միւս կողմէ քիչ  
 մ'ալ ճիշտ պայան Ռեֆրալ ընելու համար  
 թոյլտուութիւն ըրած է ճաշից աւետարան  
 կարգաւորելու, սակայն ինչո՞ւ մտածած չէ  
 որ անդին միջնայն ճիւղներէն պիտոյ  
 հայեր ալ կան եկեղեցիին մէջ, որոնց հա-  
 մար ալ հարկ է փրաններէն լեզուով աւետա-  
 րան մը կարգաւորել, որպէսզի քրիստի ըլ-  
 լայ արարողութիւնը, և միւսին ժամա-  
 նակ ներկայանին ալ գոն մնան...»

Երեսուցիքը իր խորհրդածութիւնն-  
 րը աւելի յառաջ մղելով, կ'ըսէր:  
 «Հիմա թողով օր վերաւորուած ըզ-  
 գացումները իրենց տեղւոյն վրայ սպասեն,  
 մենք քիչ մ'ալ ազգային զգացումով քըն-  
 նենք խնդիրը, աւելի լայն տեսիլներէ  
 սկսելով մեր տեսութիւնները...»  
 Պէտք է արարեբէնը իր մասնաւոր  
 տեղը ունենայ Հայոց եկեղեցիին մէջ:  
 «Ահա հարց մը որ միայն այսօր բաւա-  
 կան չէ գոհացուցիչ պատասխան մը տալու  
 և աւարտելու համար: Մանաւանդ ասոր  
 պատասխանը գտնելու համար, պէտք է որ  
 նախ գիտնանք թէ Հայոց եկեղեցին պի-  
 տի ֆելլա՞նայ թէ ֆելլա՞ններուն հայու-  
 թիւն պիտի սորվեցնենք...»

Մեր այս վերջին հարցման պատասխա-  
 նը ամէն ոք ալ գիւրտութեամբ կրնայ տալ:  
 այն է՝ ֆելլա՞նացածները պէտք է հայացը-  
 նել, որպէս զի գիւրտութեամբ ըս իշխ  
 իշխան... չըսեն...  
 Քանի որ այսպէս է, այլ ևս հարկ  
 չէր մնար ուրեմն այս վերջին դասակարգին  
 պատկանողները քաջալերելու համար իրենց  
 ստացած լեզուով աւետարան մ'ալ կար-  
 դալ տալու քաջութիւնը ունենալ...  
 Մենք ամէն բանի մէջ օրինակ կ'առ-  
 նենք Եւրոպացիները, ու հաւատքի լըն-  
 դիրներու մէջ ևս լուսազայն է որ հետեւինք  
 Ամերիկեան միտնողներուն, որոնք հոս,  
 Գահիրէի մէջ ալ, մեր աչքին առջեւ են  
 ամէն վայրկեան: Ինչ լեզուով կը քարոզեն  
 անոնք...»

«Տառամեղու հարկ չ'իայ: արարեբէնով  
 կը քարոզեն արարեբէնու: իսկ մեր Սրբա-  
 զանը ինչ ազգի պատկանողներու քարոզել  
 տուած է որքեօք աւետարանը...»  
 Ահա շատ շուր վերջնոց հարց մը,  
 որուն «Մնունդի նորութիւն» անունը կ'ու-  
 տան քառ այժմ: բուն անունը գտնելու հա-  
 մար հնութեանց թանգարանը պէտք է այցե-  
 լել և մ'ալ ապաքէն մեր ազգն ալ ազգային ու  
 մտաւորական կրկին տեսակետերով միշտ դե-  
 պի ետ ուղղած է իր քայլերը և գէպի ետ  
 ալ գնալու հակադէտ է...»

### ԵԿԻՊՏԱԿԱՅ ԳՈՐԾԵՐԸ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՍՆԵՔԷՆ Ի ՎԵՐ  
 1896 - 1902

I Ընդհանուր սեւտրիւն մը-II Եգիպ-  
 տահայ մամուլը - «Փարուս - Փիլիսի -  
 Արշալոյս - Նոր օր - Արտիսիս - Ա-  
 զուս խօսք - Մաւուրիէ դեր ինչպէս ըն-  
 րուումը և Եգիպտոսի մեջ - III Լահէի վե-  
 հաճողի ին տրիւն եղած Միքիկները - Գը-  
 յիպիսի փակուումը - IV շիշուի ի խըն-  
 դիւր - Մաւուրիէի ազգային գերեզմանա-  
 սուր - Ընտրական պայքարը Աղէքանդ-  
 րիոյ - IV Ազգային Առաջնորդարան:

(Շար. Եւստորի րիւն և վերջ)

Հայոց Գիւրտի փակուումը վերջ փո-  
 ճեր կ'ըլլան աւելի համեստ ծրագրով ընթերցա-  
 տուն մը բանալու: Կարան-Ընթերցատուն ա-  
 նուամբ ընկերութիւն մը կը կազմուի, որուն  
 Գործ. ժողովը Ատենայեան կ'ըլլայ Պ. Սրբա-  
 Բերատ: Ընկերութիւնը իր բնական հասոյթի ազ-  
 րիւր՝ 1900 Յունիս 2ին կը հրատարակէ Նոր Օր  
 անուն կրտսեալ թերթով մը՝ որ կ'ըլլայ սեպ-  
 տեմբերի 1-ին Լուսաւն-Ընթերցատուն: «Նոր  
 Օր» հրատարակ կ'ըլլին մէկ ու կէս ամիս վերջ  
 -18 Յունիս 1900ի յայտարարութեամբ-Պ. Ս.  
 Բերատ կ'ըլլայ թերթին խմբագրապետը, բայց  
 հազիւ երկու քու կէս ամիսը կ'անցնին և ա-  
 հա կը զարգեցնեն զիրքը իր այդ պաշտօնէն՝  
 կարգ մը գոգհոսութեանց տեղի տուած ըլլալուն  
 համար:

«Նոր-Օր» ժամանակ Լուսաւն-Ընթերցա-  
 տան վարչութիւնը երկու քի կը բաժնուի. Եր-  
 ձուածը կ'սկսի, Թերթին էջերուն մէջ լայն տեղ  
 մը կը գրուեն ընթերցատան ժողովներուն տե-  
 ղեկագրութիւնները: Ինչ կը տեսնենք ժողով-  
 ները որ իրարու կը յաջորդեն: Գործ. ժողով,  
 Ընտ. ժողով, Գիւրտի Յանձնաժողով, Հայուե-  
 րանի յանձնաժողով, այլովքն հանդերձ. ժո-  
 ղովներուն նիստերուն հետ բաղխումը եւս կ'ըս-  
 կըսի, խօսքի և գաղափարի բաղխումը, բաղ-  
 խում մը՝ ուսկից ծագած լոյս չէր գծախա-  
 բար:

«Նոր-Օր», այսպէս ու այնպէս, մինչեւ  
 10 Օգոստոս 1901 շարունակելէ վերջ կը զար-  
 րեցնէ իր հրատարակութիւնը:  
 1902 Յունիսի կ'ընդհատուի Արտիսիս ամ-  
 սորեայ հանդէսը, խմբագրութեամբ Օր. Մառի  
 Պէլլեքանի: հանդէսը նուիրուած է կնոջական  
 հարցերու: մեր մէջ առաջին անգամն է որ այս  
 օրինակ փորձ մը կ'ըլլայ: Հանդէսին ունենա-  
 լիք օգուտները անուրանալի են, Թերթ մը՝ ուր  
 իրարմէ հետո ապրող մէկէ աւելի կին գրիչներ  
 քով քովի երևին, Թերթ մը՝ ուր հայ կինը  
 պատկերաբան իր բոլոր ստղանդովը, այսքանը  
 որպէս ինքնին բաւական է զարկ մը տալու հայ  
 կնոջ գործունէութեանը:

Շատ հաւանական է որ պապային «Ար-  
 տիսիս» ասանին պատկերներու հետ քիչ մ'ալ

ներկայացնէ կնոջական շարժումները Եւրոպայի  
 և Ամերիկայի մէջ:  
 Վերջի հրատարակութիւնն է Պ. Սր-  
 Բերատ Օտեսանի Ազուս Խօսքը, որուն առաջին  
 և տեսերը Բարիկ երեցած են, իսկ Երգ,  
 Յրգ, Դրգ, Տրգ և Երգ տեսերը հրատարակ հա-  
 նած է Աղէքանդիոյ մէջ:  
 Մամուլին դերը՝ որ պէտք է ըլլայ  
 առաջնորդի ժողովուրդը ճշմարտին ու բարւոյն  
 ուղիին մէջ, Մամուլը՝ որ պէտք է մնայ միշտ  
 բարձր, վեր առնէ կանխական գնում հայրենե-  
 րէ, ցու է ինձ ընել թէ ամենէն աւելի անուս-  
 սուած բանն է ասիկայ երկրպագայ լրագրու-  
 թեան մեծամասնութեանը մէջ, Ինչ մեծ մաս-  
 սամբ ուրիշ բան չ'իտեւիր այլ փողոցային ոճով  
 մը շողախուած և իրարու գլուխ պայթեցնող  
 յողուածներ, որք կը թողուն ընթերցող հասա-  
 րակութեանը վրայ ամենէն վատ ապագորու-  
 թիւնը:

### Գ

Գաղթականութեան զաւլն վերջ նը-  
 շանակելի առաջին զէպը երկու միթերկներն  
 են:  
 Երբ Զարին առաջարկութեանը վրայ  
 Լահէի մէջ Զէնընկեցու թեան վեհաժողով մը  
 գումարելու զարարատու թիւները կը տեսնու-  
 ուն, Գահիրէի և Աղէքանդիոյ մէջ ալ եր-  
 կու միթերկներ տեղի կուսնան 21 Մայիս 1899  
 ին. ոգեւորութիւնը, ըստ շարժումը, կը աի-  
 րէ ամենուրեք. մեղի կ'ընկնայ մը թմբութիւնը  
 պահ մը թօթափուած է:  
 Այդ երկու միթերկներուն մէջ բուն ոգե-  
 ւորութեամբ մը կ'ընդունուին կարգադիր Յան-  
 նախուժին հետեւեալ առաջարկութիւնները,  
 որք են,

- 1- Լահէի վեհաժողովի նախագահին հետա-  
 գիր մը քաշել:
- 2- Ընտրել Պ. Մինաս Զերազը պատուի-  
 րակ Լահէի վեհաժողովին քով՝ պաշտպանելու  
 համար Հայկական խնդիրը:
- 3- 1899 տարւոյն ցուալի զէպը, ցզը  
 ւայի՝ տեղւոյն Հայոց մտաւոր զասակարգին  
 համար, Հայոց Գիւրտի փակուումէ՛ հասոյթի  
 նուազութեան հետեւեալ:
- 4- Գիւրտի մը կը գտնուի քաղաքին կեդրոնը,  
 էպէզքիսայի հանրային պարտէզին դէմը. ունէր  
 իր գրադարանը, ընթերցման սրահը և խօսա-  
 րանը՝ ուր կը գտնուէր պիլարտո մ'ալ, իր առաւ-  
 յարանները - ստէպ համոտուած ձայնակալ և  
 գործիական երաժշտութեամբ - ուր կը համա-  
 խմբուէր բաւական թուով հայեր, շատ հաճելի  
 յիշատակ մը թողած են վրաս:
- 5- Գիւրտի փակուումը վերջ փորձեր եղան  
 աւելի համեստ ծրագրով ընթերցատուն մը բա-  
 նալու:
- 6- Այժմ ունինք Լուսաւն - Ընթերցատուն մը  
 ժամանակ Բողոքի թղթին մէջ. բայց նա-  
 խորը «Գիւրտի» և արդի ընթերցատան միջու-  
 համամատուցեան եղբեր կը մնան իրարմէ հե-  
 տու. առ այժմ այս եղանակը գոն մնալու եւք,  
 սպասելով լուսազոյն օրերու:
- 7- 1899 Օգոստոսի սկիզբները ազգային -  
 եկեղեցական խնդիր մը կուգայ կը յուզէ մտքե-  
 րը, Արտասանման մէջ սկսած էին չի յիշել Օր-  
 մասնեան պատրիարքի անունը պատարագի մի-  
 ջոցին. արդէն Աղէքանդիոյ մէջ եւս զարգած  
 էր յիշատակութիւնը գաղափարի նմանօրինակ  
 հոսանք մ'ալ Գահիրէի մէջ երևան կ'ուս:
- 8- Հրատարակի վրայ կը շրջի 6 Օգոստոս 1899  
 թուականը կրող բազմաթիւ հանրագրու-  
 թիւն մը, շոր անձերէ բաղկացեալ պատգամա-  
 ւորութեան մը ձեռամբ Գաղափարական ժողովով  
 կը ներկայացուի այդ հանրագրութիւնը. պատ-  
 գամաւոր և ժողովական չ'են կրնար զերար հաս-  
 կնալ. յաջող կ'իրակները կը բարձրանան զի  
 յիշուի թէ ձայնը, ժողովականներու կողմէ  
 ձայնուն հաստիկաններ կը բերուին եկեղեցոյն  
 մէջ, և կ'իրակի գիշեր մ'ալ՝ Պէրի - Սուրբնի  
 բողոք հայոց խանութները կը բարձրանան  
 զօրքերէ կը պաշարուին պաշարման կը յաջոր-  
 զէ ձերբակալութիւնները. 50 է աւելի հայեր

ձեռնակապերով բանտ կը տարուին . ստոնց մէջ կային ընտանիքի եւ գաւակներու տէր հայրեր եւ կային ուրիշներ որք խնդրէն բնա տեղեկութիւն չ'ունէին . այդ գիշերը սխալմամբ կը ձերբակալուի նաեւ Մովսէսի թոռներէն մէկը հրեայ մը . հրեան, գործէն բոլորովին անտեղ- հակ զարմացմամբ դործերուն կը հարցնէ իր անհաւաք անկարելի կ'ըլլայ . յետոյ կը հարցնէ հայերէն մէկուն այս զարմանալի երևոյթին պատճառը . հայը կը պատասխանէ — պատճառը պարտաբարքն է ինչիւն յոյս ըսելնիս է .

— Եթէ այդպէս է, թող յիշուի, ինչ կ'ըլլայ ո՞ր կը պատասխանէ հրեան, այս մե- ջադէպն ալ ցաւալի խնդրոյ մը զուարճալի մէկ կողմն է :

Չերբակալման լուրը կայծակի արագու- թեամբ կը տարածուի քաղաքին մէջ . եւ առաջ կը բերէ ամենավատ տպաւորութիւն մը . նոյն գիշերը իսկ խումբ մը երիտասարդներ առաջ- նորգարան կը դիմեն Տ. Մամբրէ հօրմէ բացատ- րութիւն ուզելու . Տ. Մամբրէ հայր այն ժա- մանակ փոխ — Տեղագոյն էր . եւ նախագահ Գա- զարակաւն ժողովոյ Գառաւ . վարչութեան Գե- մուս կ'ըլլայ նաեւ ստախկանատունը . ուր որ անկէ հարկ եղած բացատրութիւններ կը ար- ընուին թէ եղածը լոկ եկեղեցական խնդիր մ'է . ներքին խնդիր մը . կը բացատրուի թէ հայք տեղական կառավարութեան հանգեպ չ'է կազ- մակերպած ցոյցերին . թէ հայք կը յարգեն երկրին արեւոյ զօրքնը :

— Չի յիշուի յի խնդրոյ մասին ժամանակին « Մզբաթթիւ » լրագիրը երկար յօդուածներ նուիրած է :

Անշուխտանելի դեր մ'ալ Տ. Մամբրէ հայ- րը կատարեց իր թոյլ ընթացքով . ժամանա- կին հարկ եղած խրատները առած եմ իրեն իմ հանդերձեայ աշխարհիկ կոնկրետովս : (\*)

— Չի յիշուի յի առթիւ եղած այս ձերբա- կալութիւնները պիտի փնտն միշտ սեւ արաս մը տեղական — ազգային տարբարութեանցը մէջ . որովհետեւ ձեռք առնուած այդ ձայրահեղ մի- ջոցները անարդարանալի են արտասուաց այս եովիտին մէջ . նոյնիսկ եթէ չ'ովոր նեղոսինը ըլլայ :

Մեր նշանոյ պատկերազարդ թուոյն յարտոյ երեսին մէջ հրատարակուած « Յա- լերգի Հայրենեացներու » վաճառման ին- ճետոյ ցուցակին 83րդ թիւը կրող առա- ցիկ անունը՝ Բարեբար ոմն , ու ներկա օ- րինակի համար 975 դն — Տասը Անգղիական ոմնի — վաճարած եր . գրաշարական սխա- լով մը 975 ի վերջին 5 թիւը միատրի կարգէն դրու շարուած յիշատի . կը կար- ղայցուի 97 ու կեն . այսինքն մէկ անգ- ղիական ոմնի :

Թեպէտէր նախ քան քերթիս նրապա- րակ ելնելը մեծի աչք սխալը նկատած է . ինք , որուն ուղղորդիչ միտնոյն քերթիս ղեկը անկարելի էր . սակայն մեզի տղան ղեկորդութեան վրայ կուղղեմ գայն , եւ կը յայտարարեմ թէ՛ « Բարեբար ոմն » էն մեր սուսացա՛յ գոյնարն է՝ սուսն պեղդիս- կան ոմնի . աջսինքն 975 որը . ոյր եզրու- սական , ինչպէս միտնոյն ինձերտոյ ցու- ցակի ներքե գտնուած նամագրութեան ալ կը հաստատէ այս :

Մարդու մը կենսական եւ ֆիզիքական ու- ժեքուն նուազութիւնը մեծ բաժին ունի տեղական փոստիւնէն . սկսելուն եւ յատուկ նուազում մէջ . Բայտի կերպով ապաշտեղ- ժանո՛ւ է թէ՛ սերուն յարտաբերութիւն մը կայ

(\*) Տես Արշալոյս թիւ 18

ակունքներու փոստիւնէն , եւ դժուարամար- սութեան մէջ : Արիշ խօսքով մեր ակ- աններուն փոստիւնը պէտք է նկատուի իբրև ապացոյց մեր կայունութեան վատ- առջութեան : Գանդի միբրոպիները չեն կըր- նար եղծանել առաջ մարդու մը ակունքները :

Ատամնաղոր (tartar) առաւելագէս կը բարկանայ phosphate of lime էն , որ կը զետեղուի ակունքներու բարձրութիւնը իր ընթացքին :

Ատամնաղոր պէտք է անխառն փու- թով . ակաւի վրձինի մը միջոցաւ , եւ օդ- նութեամբ վայրատուելու կարելի . եւ կամ՝ եթէ անկարելի առել զօրաւոր կերպով յա- րած է ակունքներուն , յարմար գործիքով մը պէտք է կեղեկել կամ՝ բերել տալ զայն . Ատոր նորէն հաւաքումը կրնայ արգիլուիլ՝ յօժարամիտ ուշադրութեամբ մաքրութեան եւ առողջութեան :

Վայրատուելու կարելի ընդհանրապե- րաբարուն մէջ անխառնութիւնը կը զըրա- ւէ : Անկիւայ ունի մեքենական եւ քիմիական յատկութիւններ՝ որք առողջարար են , եւ միանգամայն անփնտա : Եթէ ատոր խառ- նուի իր ծանրութեան մէկ երրորդին չափ փոշիացեալ հերիկ փրոյիտեան ( powdered orris ) , այս վերջինը կուտայ զանգուածին հաճոյական անուշահոտութիւն մը , սակայն ուրիշ կերպով անկիւայ անկարեւոր է . կա- լիճը կրնայ գործածուիլ յաճախ եւ շահա- ւոր կերպով թէ ակունքներուն , եւ թէ լին- դերուն . Երկու կաթիլ քափը՝ ակաւի վրձինի վրայ՝ կուտայ բերնին թարմու- թեան եւ մաքրութեան զգալում մը , եւ կրնէ լինել որ վարդագոյն . Հոս անցողակի կերպով պէտք է լուծել թէ՛ լինդերը կը կազմեն մեր ընդհանուր առողջութեան յերմաչափը . Եթէ անոնք յստակ , պոյժաւ , եւ կարծիք են՝ ազպայց մըն է թէ՛ մենք առողջ վիճակի մը մէջ ենք : Ընդհակա- րակին՝ եթէ ատոնք տժգոյն եւ գունաթափ վարդագոյն են՝ կը ցուցնեն թէ մեր ար- իներ նուրբ են , եւ կարծիք (corpusele) ներք նուազ են ատոր մէջ : Խիստ վատա- ւառջ վիճակի մէջ գտնուողներուն լինդերը գրեթէ ճերմակ են :

Յօրակալին կամ Յօրակալի նոր հակա- նակական մըն է որ շատ կը գովուի իբրև գեղ ակունքներու փոստիւնէն գէմ : Անի- կայ ու թունաւոր է , ոչ գործող , եւ ոչ ալ մաշիչ . եւ այսպէս կը թուի ունենալ ամե- նաբնոր յատկութիւններ , եւ կրնայ յա- ճախ գործածուիլ բերնին մէջ : Անկիւայ կը ծախուի գեղարարներու քով 40 Օ/0 հե- ղուի ձեւով . այդ վիճակին մէջ անկիւայ յստակ , սնդոյն հեղուկ մըն է , եւ ունի սուր հոտ մը : Այդ հեղուկէն 10 կաթիլ 120 կրամ ջուրի մէջ՝ կ'ընէ խառնուրդ մը որ պատրաստ է գործածուելու բերնի մէջ . եւ եթէ փափաքելի՛ է անկիւայ կրնայ միաց- ուիլ կուրիճով . Գրեթէ անկիւայ վրայ լինուտեանով՝ Գրեթէն եւ կ'ընէ լուս հակա- նակական լուրջուր , եւ կ'անհետացնէ բերնի մէջ եղած գէշ հոտը : Մաքուր ջու- րը՝ տաք կամ ցաղ՝ է հեղուկ մը որ ա- զատ է փոշի մասնիկներէ , եւ միշտ մեր մօտը . եւ ակաւի վրձինի մը օգնութեամբ՝ կը կատարէ լուս գործ՝ բերանը եւ ակաւ- ները մաքուր պահելու մէջ , երբ գործած- ուի օրը երկու անգամ կերակուրէն յետոյ մասնաօրացէս՝ օրուան վերջին կերակու- րէն ետքը :

Փռած ակունքները լեցնել տալը խիստ կարեւոր է . Երբ անոնք լուս կերպով լեց- ուած են՝ փոստիւնը շատ քիչ անգամ նորէն կ'սկսի սնունդ մէջ : Ակաւի ուրիշ հիւսնութեանց՝ անշուշտ՝ ժամանակին հազ տանելու է :

Ակաւի յարձ ինչպէս ակունքները վերէ՛ շատ անգամ՝ արդիւնք է ակաւի փոստիւնէն . բայց անկիւայ կրնայ ըլլալ արդիւնք գործարարութիւնի մը յատալ կուգայ պոյժ առնելէ՝ Երբ ցար միայն գնդեքա- ցուի արդիւնք է՝ անկիւայ առել մեծ ծա- ւալում ունի , եւ կ'ազդէ նաև ծնօտի շուր- ջը գանձուող մկանները :

ՏՕԳԹ . Ս . Վ . ԵԶԵԿԵԼԵԼԵ Ակեք . 7 Յունվար 1903

ՆԱԻԱՀԱՆՈՒՄԻ ԽԺԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Թուրքիոյ նաւահանգիստներուն մէջ գործուած եւ կայսրակերպութեան ու ան- կարգապահութեան եւ միանգամայն ան- լարջութեան զգացումէ առաջացած անկար- քութիւններուն առաջին եւ վերջին նմոյշը չէ որ պիտի տանք :

Եթէ թուրքիոյ տնտեսականօրէն այսօր շատ անկեալ վիճակ մը ունի կրնանք ըսել , ատոր բուն շարժառիթը , բուն պատճառը , բանի մը տարիներէ ի վեր թուրք կառավա- րութեան մէջ տիրող յեծիմն է :

Թուրքը ինք իր ձեռքով անգթօրէն դատարկացուցիւր քաղաքներու (՞) բնակիչնե- րը , սարսափելի կոտորածի մը ծրագիրը , լըզա- նալով ու գործողութիւնով , ի ֆիսալ զար- գացման եւ յաւանգիւթեան : Թուրքին ա- լերիչ քաղաքականութիւնը հոտ ալ կանգ չ'առաւ , անոր սրտին մէջ արթնացան ու ուռ- ճացան յանցարարի մտաշարաւր կասկածնե- րը՝ ու այդ կասկածները զինք շատ հեռու- ները մղեցին ու պիտի մղեն դեռ :

Թուրքը հանգիստ չ'պիտի ունենայ , ց'արչափ իր գէմը ունի յանրախի զրկուած , շարաբուած ու իրմէ կեղեքուած ու կոտոր- ուած աշխատասէր ժողովուրդ մը . ժողո- վուրդ մը՝ որուն վրայ միայն կարող էր իր բարեբաստութիւնը հիմնել . ժողովուրդ մը՝ որուն անհաստեղ իր մէջ գտնուածներուն գերագոյններէն ալ գերելիք ավելի բունով , պիտի կարենար նախանձել վիճակի մը մէջ պահել թէ՛ իր անտեսական կացութիւնը , թէ՛ իր պարզացումի բնակը , թէ՛ իր նիւ- թական ուժերը՝ ու հետեւաբար զինուորակա- նին բարգաւաճումը , թէ՛ իր հանգիստը ու խաղաղութիւնը , ըստ ամենայնի մրցելու համար այն ապգերուն հետ , որոց , աւաղ , այժմ լուսութիւնը եւ կողմնակցութիւնը գնելու պարտաւորուած է առանձնաշնորհումներու փոխան , դրամի փոխան , իր ամենամեծ սկզբունքները գոհելու փոխան . . . իր եր- կիրներուն մեծ մարդ անոնց տրամաբար- թեանը տակ գնելու փոխան . . .

Թուրքը իր հանգիստը չ'պիտի գտնէ , ց'որչափ իր կասկածոտի քաղաքականութիւնը կերպով մը գաւառներու շէնայն . . .

Բայց գործողութիւն մ'է խոստովանել թէ՛ այլ հիւանդ դարձն ալ ինքզինքը ո՛ր է եւ կերպով արդարացիելու միջոցը չունի . նա շատ մը բաներէ զատ՝ կը նմանի խոչոր ֆիսա մը հասցող ընտանի կենդանիի մը , որ ծակէ ծակ կը փախի իր տիրոջը մէկ ծուռ ակնար- կին չ'հանդիպելու համար :

Թուրքը (կառավարութիւնը ըսել կուզ- ուի) գլխին մինչև ստերն եղունգները մե- նելունի ի դոմէնէն է . քաղցրիկ մաշը կը փրկէ զինքը . եւ ոչ ապաքէն մահամբձի հը- ուրիւնը կը լեզուէ իր կոկորդը , եւ օր մը գեղանկացած պիտի դոմուի իր գաղտնասնե- ակներէն միոյն մէջ . . .

ՄՏ . Երչափ հեռի կը գտնուինք մեր նիւթէն . մեծ ընկերատաններու չափ խո- րունկները թաղուիլ . . . բայց երկու պատ- մական բառերով ալ թուրքիոյ մը տնտե- սական վիճակը խառնալիք , կը նմանի այն մարդուն որ ստուգը հատոր մը կը թղթա- տէ , առանց բառ մը կարդալու . allons donc պիտի բսեր « Փարս » . . .

Նաւակայքերու մէջ ի գործ դրուած խտտութեանց մէկ նորայիսկ պիտի գրե- ինք մենք , կամ երկու բառով փոքրիկ պատմութիւն մը պիտի ընենք այժմէն . թիւն ունեցող խնդրոյ մը շուրջ դառնա- լու սրայմանաւ :

Ու թը 10 տարիներէ ի վեր Եգիպտոս հաստատուած անմեղ , չէզոք ու իր գործին փարած երիտասարդ մը տակ երկու շարժ քառալ իր հայրենիք , իր կնոջ ու զաւակ- ներուն քով երթալ կը մտադրէ , ու կը գործողութիւն ալ . Խառնուրդ կը վաճառէ . հա- չիւները կը մաքրէ . հինգ վեր , հինգ վար տեսակէն առնելիքները կը գանձէ ու հան- ցիստ սրտով կը մեկնի :

Հայրենիք հասնելու ոսկեգոյն մտա- ծուածները իր զոյղոյղ քայլերը կը զօրացնեն .

իր փոքրիկ զաւակը կամ զաւակները կարո- տագին համարել կարենալու երջանկու- թիւնը կը մոռցնեն իրեն ճանապարհի երկա- րորեայ տաղաւակներն ու նեղութիւնները . իր կենդանի ու անէպացած սիրելիներուն յիշա- տակ կը քաշէ զինքը գէպի այն վայրը , ուր ժուռկոծող անտեսութեան հողակցութիւն վար- դաստանը հող երաւիս արտասուաց կայլակնե- րու ծարաւը կ'զգայ . ու կը մեկնի . . .

Եգիպտոսի ազատ հողին վրայ սուրբազոյ ճեպընթացը ստանէ ստան կը փոխադրէ զինք . իր հայրենիքին կը մօտենայ . . . Այնպէս ծաղը իր օրհնութիւնը կը նեղէ ազնիւ երիտասարդին գլխին , ու կը թողու- ր այդ թեթեւ բեռը իր օրտին սակերբը . քերելով անցին հանգարտ եւ խաղաղ՝ ու ա- լելի մօտենայ իր հայրենիքին . . .

Մէջքանդրիայէ Ալէքսանդրէ՛ թ . կարճ ուղի մը չէ՛՝ այնպէս չէ՛ : Ինչե՛ր չէ մտա- ծած ու ծրագրած արդեօք մտովի՛ մեր եր- ջանիկ ուղեւորը . նիւթը շատ ընդարձակ է ու չափազանց պիտի երկրորդ . սակայն քանի որ արդէն Ալէքսանդրէ՛ թի , դուրս կը գտնե- ուինք , նշքարկը վէրքին վրայ գնենք :

Կասկածոտ թուրքն է որ կը մօտենայ հայուն , իր աւերիչ պահանջները ի գործ դը- նելու . . .

- Ուրի՛ք կուգաւ , կը հարցնէ :
- Եգիպտոսն :
- Լ՛ուր կերթաւ :
- Հայրենիք :
- Ինչ կ'ընէր Եգիպտոս :
- Խառնութեան էի . պատուաւոր ու իմ գործիս ետեւէն վազող մէկը , որպէսզի ըն- տանեքս ապրեցնեմ . . .
- Կրնա՞ս հաստատել :
- Այո՛ :
- Ուրեմն այդ ամէնը հաստատելու հա- մար Եգիպտոս վերադառցիր . . . Աստուած բարի ճանապարհ տայ : Կ'ընէ լաօկնաբար :
- Այդուրդ գնացած ճամբով կը վե- րադառնայ Եգիպտոս , իր պատուաւորու- թիւնը կը հաստատէ կառավարական թըղ- թերով ու կը վերադառնայ դարձեալ իր հայրենիքը . . .

Ահա պատմութիւն մը՝ իր սեղմ գծե- րուն մէջ . ինչպէս չ'ըսենք թէ թուրքին կասկած իր քայլայնութիւն է եւ ընդ միշտ ան- նախանձելի տնտեսական տագնապը պիտի տիրէ հոս :

Ընդհանրապէս անշուշտ իր մտքին առջև կրնայ պատկերացնել ու երևակայութեանը առջև բերել ույն ֆիսաները որ ուղեւոր մը կրնայ ունենալ կրկնաճարգութիւն մը կատարելու համար :

Ու , ինչպէս ըսինք , այս առաջին զոհը չէ որ կ'ընէ հայու թեմէն , իր ամենողորմած կառավարութիւնը . Թեմակար թո՛ղ հրճու- ուի՝ ու հպասակները թո՛ղ հեծնեն , մինչև որ Աստուծոյ արարութիւնը հասնի . . .

ԱՐԳՈՍ

ԵՆՈՐՀԱՅԱՒԻԳ

Տեր եւ Տիկին Պողոս Էջմիածնէն , ( ի Ճիլիպէ Պոլիսիոյ ) Այրի Տիկին Եղիսա- րէյ Էսիրնէյնէն , Տեր եւ Տիկին Ասուր Էսիրնէյնէն , Այրի Տիկին Մարիալ Էսիր- նէյնէն , Տեր եւ Տիկին Կարապէտ Էսիրնէյ- նէն Տիար Ալպուր Էսիրնէյնէն , Այրի Տի- կին Մարիալ Բուլնէն եւ զաւակով , Տեր եւ Տիկին Վառնապուր Գարիպէտէն , Այ- րի Տիկին Սարենիկ Էսիրնէյնէն , Տիար Խա- լիկ Էսիրնէյնէն Տեր եւ Տիկին Վահրամ Ճիլիպէնէն , քերթիս միջոցաւ իրենց շը- նորակալիքի իր յայտնէն ալ նաեւ ազգա- կրանայ եւ բարեկամաց , որով ներկայ առ- սոյ 15 ին

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱՆՆՈՒՄԻՍ ԷԼՄԱՍԵՆԻ յոյրակարարութեան ներկայ գտնուելով՝ ի- րենց ցարակցական զգացումներն արսա- յայտնելու այս ժամու առթիւ :

Տես Արշալոյս թիւ 18



